

«ՀԱՅԱԽԱՊԱՏՈՒՄ ԾԱՌՔԻ» ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

(Հետազոտություն իրավաբանական ապացուցման տեսության
հիման վրա և իրավաբանական հետազոտման մեթոդի միջոցով¹⁾)

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ դասախոս

«Հաճախապատում Ծառքը» երբեկցէ կրոնագիտական, իրավագիտական կամ բարոյագիտական տեսակետից չի հետազոտվել, և ոչ ոք դրանց ուսումնասիրման լուրջ փորձ չի կատարել: Անընդհատ, առանց հիմնավոր ապացույցների, վիճարկվում է դրանց հեղինակության հարցը, արտահայտվում են զանազան անհիմն, սուբյեկտիվ կարծիքները²⁾: Որոշ հեղինակներ՝ հիմնվելով Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքի տվյալների վրա, այն վերագրում են Մ. Մաշտոցին: Որոշ հեղինակներ էլ դրանք վերագրում են Գրիգոր Լուսավորչին, և դա՝ նորից առանց բավարար ապացույցների ու փաստարկման: Այդ ամենի հետևանքով դրանց գրելու ժամանակը արհեստականորեն տեղափոխվում է 4-րդ դարի սկզբից 5-րդ դար, որի հետևանքով դրանք արժեզրկվում են: Իսկ դրանք իրենցից ներկայաց-

¹⁾ Տե՛ս **Լոեր Բ.** Տеория доказательств. М., 1989. **Симаков Г. Ф.** Основы теории доказательств в уголовном процессе. М., «Проспект», 2002. Պատմական դեպքերը և գրականագիտական աղբյուրները իրավաբանական ապացույցման տեսության հիման վրա ուսումնասիրելու տակ մենք հասկանում ենք ոչ թե քրեադատավարական ապացույցման պրոցեսը մեխանիկաբար և լրիվորեն պատմական գիտության և գրականագիտության մեջ տեղափոխելը և կիրառելը, այլ միայն դրա որոշակի տարրերի ներմուծումը, և այս կարգի ուսումնասիրությունները նույնպես որոշակի նորմի, կանոնի ներքարկելը՝ դրանց բազմակողմանի, լրիվ օրյեկտիվ ուսումնասիրությունը ապահովելու, օրյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու նպատակով: Այս ոլորտներում կատարվող հետազոտությունների ընթացքում որոշակի հետևողությունների հանգելը նույնպես պետք է կատարվի միայն ծեռք բերված օրյեկտիվ ապացույցների հիման վրա ու տրամարանական փաստարկման միջոցով, որի ընթացքում պետք է հաշվի առնի ժամանակի ու տարածության, պատճական դեպքերի, դեմքերի ու աղբյունների առանձնահատկությունները՝ դրանով իսկ բացառելով ամեն տեսակի «ապացույցում» սուբյեկտիվ, այդ թվում նաև՝ կոնվենցիոնալ կարծիքի, արժեքային գնահատականի ու ցանկության հիման վրա:

²⁾ Տե՛ս **Գարեգին Զարբանալյան**, Յայ Յիծ դպրության պատմություն, Վեճետիկ, Սիմիթարյան տպարան, 1932: **Ա. Զամինյան**, Յայ գրականության պատմություն, Նախիջևան, մաս Ա, 1914: **Պ. Ֆեքրեր**, Յայկական աշխատասիրութիւնը, Վիեննա, 1895: **Յ. Ածառյան**, Յայոց գրերը, Երևան, «Յայաստան», 1968, էջ 316-350: **Կորյուն**, Վաղ Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով՝ Ս. Աբեյյանի, Երևան, 1962, էջ 584: **Ս. Աբեյյան**, Յայոց հին գրականության պատմություն, վեց հատորից, հ. 1, Երևան, ՅԱՍՍՌ ԳԱ հրատ., 1944, էջ 119-126: **Ա. Ակրտյան**, Յինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, «Յայաստան», 1968, էջ 112-135: **Յ. Գարդիելյան**, Յայ փիլիսոփայական նորի պատմություն, հ. 1, Երևան, 1956, էջ 545: **Եղիյա ինքը՝ Սեսրոպ** Սեսրոպ Մաշտոցի աշխարհայացքը // Սեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 1963, էջ 85-191: **Ա. Մարտիրոսյան**. Մաշտոց. Իзд. ԱՀ Արմ. ՀՀ, Երևան, 1998, 28- 32, Վիճակ արմանական կուլտուրայի մասին (5-18 դար) Երևան, 1982, ս. 9-17. **Լեռ**, Սեսրոպ Մաշտոց, ԵՊՀ հրատ., Երևան, 1968: **Դ. Սևակ**. Մեսրոպ Մաշտոց և ստեղծման պատմությունը. Ինքնական պատմությունը. Երևան, 1962.

նուն են ունիկալ, համարժեքը չունեցող կրոնափիլիսոփայական և իրավաբանական բնույթի տրակտատ, անգնահատելի են և ոչնչով չեն զիջում Օրիգենեսի, Կիպրիանոսի և մյուսների երկասիրություններին³: Դրանով նաև նվազեցվում է Գր. Լուսավորչի, հետևաբար նաև՝ հայերի դերը և նշանակությունը քրիստոնեական քաղաքակրթության ձևավորման մեջ:

Այնինչ «Հաճախապատում ճառքի» և Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» միջոցով են այլ ազգերի և այլ իրադրության մեջ ստեղծված քրիստոնեական կրոնը, բարոյականությունը, իրավունքը, էսթետիկան, գաղափարախոսությունը և բուն Աստվածաշունչը հայացվել, քրիստոնեական հավատալիքները, նորմերը տեղայնացվել, ներդրվել են հայկական արհական ռասայական հոգու մեջ՝ դուրս մղելով հայկական ազգային գրադաշտական կրոնը, իրավունքը, էսթետիկան, բարոյականությունը: Այն գաղափարական հիմք է ծառայել Հայաստանում քրիստոնեական հեղափոխության կատարման, քրիստոնեական պետության, իրավունքի և ընդհանրապես՝ քրիստոնեական քաղաքակրթության ստեղծման գործում:

Օտարազգի և հայ պատմաբանների, գրականագետների հիմնական ապացույցն այն մասին, որ «Հաճախապատումը» գրել է Մաշտոցը, դա Արշակունյաց դինաստիայի մասին հիշատակությունն է «Ի» ճառում: Այդ ճառի 163-164 տներում ասված է, որ եթե Արշակունիները զգաստանան, ապա ավելի պատուհաններ կլուն, քան կրել են⁴: Այս նախագգութացունը Մ. Արենյանը, Ա. Սկրտյանը և ուրիշներ, հետևելով Կորյունին՝ վերագրում են Մաշտոցին՝ արված Խոսրով, Վոամշապուհ և Արտաշես Գ Արշակունի (422-428) թագավորների հասցեին⁵: Եվ նրանք չարաչար սխալվում են: Մաշտոցի և Կորյունի ժամանակ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունն արդեն վերացել էր: Ինչ վերաբերում է այդ թագավորներից Խոսրովին ու Վոամշապուհին, ապա նրանք իրենց հանդիմանելու որևէ տեղիք անգամ չեն տվել և «զգաստանալու» պատճառ չունեին: Արտաշիր Գ-ն էլ, ավելի շուտ, ոչ թե ոչ նորմատիվ մարմնական հակումներ է ունեցել, այլ միայն դրանց մեջ մեղադրվել է՝ դառնալով իրանական արքունիքի հեռագնա պլանների ու տարածած լուրերի գոհը⁶, և նրանց նախագգութացնելը թագավո-

³ Տե՛ս *Климент Александрийский*. Строматы. Перевод Н. Корсунского. Из кн.: Отцы и учители церкви 3-его века. Онтология, т.1, изд. «Либрис», М., 1996; Творения священника Киприана, епископа Карфагенского. Изд. «Паломник», М., 1999. *Ориген*. О началах. Самара, «РА», 1993 (на основе издания Казанской духовной академии 1899 г.); *Ориген*. Против Цельса. Перевод с греческого Л. Писарева. «Экум. центр ап. Павла», М., 1996; *Евсевий Кесарийский*. Церковная история, М., 1993; *Евсевий Кесарийский*. Жизнь Константина. Перевод СПб. Духовной Академии, пересмотрен и исправлен Серповой В. В., Примечания Л. М. Калинина. Изд. Группа Labarum, М., 1998.

⁴ Տե՛ս Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հասոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 124:

⁵ Տե՛ս *Մ. Արենյան*, Հայոց հիմն գրականության պատմություն, վեց հատորից, հ. 1, Երևան, ՀՍՍՈ ԳԱ հրատ., 1944, էջ 120: *Աշոտ Սկրտյան*, Հինգերորդ դարի հայ դպրություն, «Հայաստան», Երևան, 1968, էջ 117:

⁶ Տե՛ս *C. A. Խաչատրյան*. Указы Езидегерта Второго и его министра Михрнерсеха об отречении армян от христианства и их аксиологический, юридический, логический и социологический анализ. Ереван, 2009.

րության հավանական կորստի վտանգի մասին՝ ավելորդ է, անտեղի: Հատկապես, որ այդ գործընթացներն արդեն այս թագավորների կամքից դույզն իսկ կախված չեն եղել, և դա ոչ միայն այն պատճառով, որ նրանք նշանակովի էին: Բացի ամենայնից՝ Կորյունի կողմից «Վարք Մաշտոցի» գիրքը գրելու ժամանակ այդ Արշակունի թագավորների իրավունքները դադարեցվել էին, Մաշտոցն էլ մահացած էր, և չէր կարող որևէ Արշակունու նման նախազգուշացում անել: Իրականում «Հաճախապատում ճառքում» տեղ գտած այդ խոսքերը գրված են Գր. Լուսավորչի կողմից, և ուղղված են Տիրիդատ Երրորդ թագավորին: Վերջինիս հիշեցում է արվում նրա հոր՝ Խոսրով Երրորդի կողմից, քիչտոնյաներին հալածելու պատճառով թագավորությունը և կյանքը կորցնելու հանգամանքը, և նա նախազգուշացվում է նման վարքագծից ձեռնապահ մնալուց⁷:

«Հաճախապատում ճառքը» Մաշտոցին վերագրելու Պ. Ֆեթերի և նրա հայ հետևորդների հաջորդ «ծանրակշիռ» ապացույցը Կորյունի նշանավոր «Վարք Մաշտոցի» գրքի «Էջ» գլխի պարունակած տվյալն է այն մասին, թե իբր Մաշտոցը «...շատ խրատական և զգուշացուցիչ թղթեր էր ուղարկում բոլոր գավառներու...»⁸: Դրանցից ոչ մեկը երևան չի եկել, և այդ հանգամանքը շատ կասկածելի է: Ի՞նչն է պատճառը, որ նման սրբի գրած թղթերը չեն պահպանվել, բայց իրենց դերով ու դիրքով նրան շատ զիջող պատմիների ու եկեղեցականների գրվածքներ ու թղթեր պահպանվել են: Անմիջապես պետք է նաև ասել, որ այստեղ խոսքը անձնական նամակագրության մասին չէ: Խրատը, տվյալ դեպքում, պարզ խորիրդատվություն չէ, իսկ «քուղթը», այն էլ՝ «զգուշացուցիչ», ուղղակիորեն նշանակում է վարքագիծ արգելող կամ սահմանափակող, կրոնաիրավական, բարոյաիրավական բնույթ ունեցող տեքստ: Չնորանանք, որ «քուղթ» կամ «նամակ» է կոչվել նաև Հազկերտ Երկրորդի նորմատիվ բնույթ ունեցող հրամանագիրը հայերին հավատափոխ անելու մասին:

Այդպիսի անվանումներ կրող տեքստերը կարող էին և եղել են Աստվածաշնչի ու օրենքների հիման վրա ստեղծված, նորմատիվ բնույթ ունեցող հրահանգներ կամ դրանց պարզաբանումներ, և դրանց կատարումը պարտադիր բնույթ է կրել, և եթե այդպիսէ, ապա դրանց հասցեատերերը պարտավոր են եղել դրանք ընդունել և կատարել: Եթե անգամ ընդունենք, որ դրանք օրենքի նշանակություն չեն ունեցել, հրահանգներ չեն և պարտադիր կատարման ենթակա չեն եղել (որը հնարավոր չէ), ապա իրավաբանական նշանակություն անպայման ունեցել են: Այդ ամենից նորից հարց է առաջանում, թե դրանց կատարումն ի՞նչ ուժով է ապահովված եղել: Նման «թղթեր» ուղարկելու համար առնվազն անհրաժեշտ էր լինել իրավունքի նյութական աղբյուր, ունենալ նման հնարավորություն տվյող պաշտոն, իսկ Մաշտոցը եղել է վարդապետ, հետո էլ՝ քորեպիսկոպոս, կաթողիկոսի նվիրակ, օգնական և հետևաբար՝ իշխանական գործադիր-կարգադրիչ լիազորություններ չունեցող: Ավելին, նման լիազորություններից, սկսած

⁷ Տե՛ս **Ս. Ա. Խաչատրյան**, Խոսրով Երրորդ Մեծի և Տիրիդատ Երրորդ Մեծի թագավորելու ժամանակի հարցը (Քննություն իրավաբանական հետազոտման մեթոդի միջոցով), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 13, 2011:

⁸ Տե՛ս **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Աշխարհաբար բարգմանությունը ներածական ուսումնափրությամբ և ծանոթագրություններով՝ Ս. Աբեղյանի, Երևան, 1962, էջ 127:

425-428թթ., մահից շուրջ 10-15 տարի առաջ, գրկված է եղել նաև ինքը՝ Սահակ կաթողիկոսը: Դա տեղի է ունեցել Արտաշիր Գ թագավորի գահընկեցության հետ կապված վեճերի արդյունքում⁹: Այդ թվականներից էլ մինչև Մաշտոցի մահը հայ եկեղեցու գլուխ են կանգնած եղել պարսիկ թագավորի նշանակած օտարազգի կաթողիկոսներ, որոնք ունեցել են չափազանց լայն լիազորություններ, և նման ինքնագործունեություն նրանք կարող էին չհանդուրժել¹⁰: Բացի ամենայնից, այդ խրատագրերն ու «զգուշացուցիչ թղթերն» ընդունելու համար հայ եկեղեցական-ներին նույնպես անհրաժեշտ է եղել համապատասխան թույլտվություն, որի գոյության մասին տվյալներ չկան: Այս ամենը խոսում է այն նասին, որ նման բնույթի թղթեր Մաշտոցը չի գրել, այլ գրւե և ընդամենը՝ դավանարանական բնույթի նամակներ: Դրանցից պահպանվել է Կոստանդնապոլսի պատրիարքին գրածը՝ Թ. Մոպսուեստացու թղթերի կապակցությամբ, բայց որը եղել է Սահակ Պարթևի անունից: Իսկ իրականում նման իրավասություն ունեցել և նման թղթեր կարող եր և ուղարկել է Գր. Լուսավորիչը, որի արածներն ել Կորյունը վերագրել է Մաշտոցին՝ մոդիֆիկացնելով Ազարանգեղոսի գրքի 849 պարբերության իմաստը:

«Հաճախապատում ճառքը» Մաշտոցին վերագրելու Պ. Ֆեթթերի և նրա հայ հետևորդների «ծանրակշիռ» հաջորդ պապույցը Կորյունի նշանավոր «Վարք Մաշտոցի» գրքի «Ի» գլխի պարունակած տվյալն է այն նասին, որ Մաշտոցը գրել է «Հաճախապատում ճառքեր», «Ծնորհագիր մատյաններ» և այլն: Այդ ճառերն ել նրանք նույնացնում են այն 23 ճառերի հետ, որոնք հասել են մինչև մեր օրերը «Հաճախապատում ճառք» անվանումով, դրանք վերագրում Ս. Մաշտոցին: Նրանց չի կասեցնում այն փաստը, որ դրանց վերագրում առկա է Գր. Լուսավորիչի անունը: Այդ անելուց նրանց հետ չի պահում նաև այն հանգամանքը, որ Կորյունի գրքի այդ գլուխը նույնություն է կազմում Ազարանգեղոսի «Հայոց Պատմություն» գրքի 886 պարբերության հետ, այլ ընդհակարակը, նույնիսկ քաջալերում է այդ անել: Եվ նրանք այդ և այլ պարբերությունների ու մտքերի ընդհանրությունները, որոնք առկա են այդ երկու հեղինակների գրքերում, համարում են լրացուցիչ «ապացույցներ» այն բանի, որ նրանցից նախաստեղծը եղել է Կորյունը, իսկ Ազարանգեղոսը՝ ընդօրինակող, եթե ոչ՝ պլազմատ: Արանցով էլ «Հաճախապատում ճառքը» Մաշտոցին վերագրողների «ապացույցները» սպառվում են:

Նախ և առաջ՝ Կորյունի գրքի «Ի» գլխի պարունակած և տարակարձությունների հիմք և առիթ տվյող փաստերի մասին¹¹: Այդ գլուխը իր բոլոր պարամետրերով՝ ինաստով, շարադրման ձևով, ոճով համընկնում է Ազարանգեղոսի գրքի 886 պարբերության հետ: Դրանց միջև կան միայն ձևական տարբերություններ: Մասնավորապես՝ Կորյունի մոտ Գր. Լուսավորչի անունը փոխարինված է Մաշտոցի անվամբ, «դժվարապատում» բառը՝ «ոյուրապատում» բառով (թեև իրա-

⁹ Տե՛ս *C. A. Խաչատրյան*. Ուказы Ездигерта Второго и его министра Михнерсеха об отречении армян от христианства и их аксиологический, юридический, логический и социологический анализ. Ереван, 2009.

¹⁰ Տե՛ս *Սովորես Խորենացի*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 430-439:

¹¹ Տե՛ս *Կորյուն*, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 120: *Ազարանգեղոս*, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 490 (491):

կանում այդ ճառերը դժվարապատում են), «զուարթացուցանելի» տերմինի փոխարեն օգտագործվել է «զարթեցնել» բառը և այլն: Կորյունի գրքի այդ գլխում ասված է. «Այնպիսի առավել և բարձրագույն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշտոցի **Ճառս յաճախագոյնս, դիրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս** ի լուսավորութենէ և ի հիւթոյ գոոց մարգարեականաց կարգել և **յօրինել**, լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ծշմարտութեան:

Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի **յանցաւորացս** աստի, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն, երիւրեալ կազմեալ, զի հեշտընկալք և դիրահասոյցը տխմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սրափել զարթուցանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետիսն քաջալերել»¹²: Կորյունի գրքի այս գլխի հիման վրա, Ս. Աբեղյանը, որը լրիվ այն սխալ է թարգմանել¹³, անառարկելի տոնով եզրակացնում է, որ այնտեղ հիշված «Ճառս Յաճախագոյնսը» Մաշտոցի գրած և մեզ հասած «Յաճախապատում ճառքն» է, բայց որը «Գր. Լուսավորչին է վերագրվել այդ գրավածքին ավելի մեծ հեղինակություն ընծայելու համար և որպիսի որևէ կասկած հեղինակի մասին փարատվի, ամեն առանձին ճառի վրա Ս. Գրիգորի անունը կրկնվել է իբրև վերնագիր»: Նա մոռանում է, որ ինքը՝ Մաշտոցը, իր ժամանակին քիչ հեղինակությունից չի օգտվել և եթե դրանք նա գրած լիներ, ապա դրանք կկրեին նրա անունը և ոչ թե ուրիշինը: Եվ այդ, ինչպես նաև մնացած բոլոր նույնությունները, որոնք առկա են Ազարանգեղոսի ու Կորյունի գրերում, Աբեղյանի կողմից անվերապահորեն կոչվում են «ամկապ» փոխառություններ Կորյունից¹⁴: Նման գնահատականներ տալու հիմքեր կամ ապացույցներ նա չի ունեցել:

Ազարանգեղոսի «Պատմության» մեջ այդ նույնը, որոշ տարբերություններով՝ առկա է 886 պարբերության մեջ: Այն ունի հետևյալ տեսքը. «Ապա յետ այսպիսի գործոց դարձեալ առաւել բարձրագոյնս վարդապետութեամբ սկսեալ երանելույն Գրիգորի ճառս յաճախագոյնս դժուարապատումս առակս խորիմացս դիւրալուրս **բազմադիմիս շնորհագիրս**, յարդարեալս ի զօրութենէ և ի հիւթոյ գոոց մարգարեականաց, լի ամենայն ճաշակօք **կարգեալս և յօրինեալս** աւետարանական հաւատոցն ծշմարտութեան:

Յորս բազում նմանութիւնս և **օրինակս ի յանցաւորաց** աստի, առաւել վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն երիւրեալ, զի հեշտընկալք և դիրահասոյցը տխմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սրափել զուարթացուցանել և հաստահիմն առ խոստացեալ աւետիսն քաջալերել»¹⁵: Պետք է ասել, որ պարբերությունը Ազարանգեղոսի գրքի թարգմանիչները, այդ թվում՝ ռուսերեն լեզվով, նույնպես թարգմանել են Աբեղյանի նմանությամբ՝ և նույնպես չհասկանալով դրա իսկա-

¹² Կորյունի գրքի այս հատվածի գրաբար տարբերակը վերցված է 1944 թ. լույս տեսած Մանուկ Աբեղյանի «Յայոց հին գրականության պատմություն» գրքի առաջին հատորի 119 էջից:

¹³ Տես **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ և ծանրագրություններով՝ Ս. Աբեղյանի, Երևան, 1962, էջ120:

¹⁴ Տես նույն տեղում, էջ 119-120:

¹⁵ Տես **Ազարանգեղոս**, Յայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 490 (491):

կան իմաստը¹⁶:

Իսկ դրա բովանդակությունը բոլորովին այլ է: Ահա այն՝ մեր թարգմանությամբ. «Ապա այսպիսի գործերից հետո դարձյալ երանելի Գրիգորը սկսեց բարձրագույն գիտությամբ մարզարեական գրքերի զորությունից ու նյութից հաճախագույն (հաճախապատում), դժվարապատում ճառեր, խորիմաստ, դյուրալուր առակներ, բազմադիմի շնորհագրեր (ստեղծել), մարզարեական գրքերի զորությունից ու հյութից, ավետարանական ճշմարիտ հավատի հիման վրա ամենայն ճաշակով կարգել (օրենքով կարգեր սահմանել – Ս. Խ.) և օրենսդրել: Դրանցում նա հանցագործությունների բազմաթիվ նմանություններ ու օրինակներ բերեց, առավելապես դրանցով հանդերձյալի հարության հույսին ապավինելը (ապավինելու անհրաժեշտությունը) երևողեց, որպեսզի հեշտությամբ մոլորդողներին և դյուրահաս տիմարներին և մարմնական բաներով զբաղվածներին սրափեցնի, զվարթացնի և դեպի խոստացված հաստատահիմն ավետիսը քաջալերի»: Ինչպես տեսնում ենք, այն խիստ տարբերվում է Աբեղյանի և այլոց թարգմանածներից:

Ազաթանգեղոսի գրքի այս պարբերությունը նաև խիստ բազմիմաստ է, խորիրդավոր: Նախ՝ այն մասին, թե ինչու՝ հաճախապատում կամ հաճախագույն և դժվարապատում: Իրականում իր ճառերը Գր. Լուսավորիչը «Հաճախապատում» է կոչել Ավետայի օրինակով: Հաճախապատում և դժվարապատում է համարվել Ավետան կամ Ավետիսը, Ավետարանը, «քրմական գիտության գիրքը»¹⁷: Զրադաշտական քրմերը պարտավոր են եղել Ավեստան, որը համարվել է դժվարապատում՝ իմանալ բերանացի և հաճախ կրկնել, որպեսզի չմոռանան: Գր. Լուսավորիչն էլ այդպես է կոչել իր ճառերը՝ դրանք նույնպես համարելով «դժվարապատում», հաճախ կրկնելու ենթակա՝ ուսումնա այդ եղանակը համարելով ավետարանական «Ճշմարտությունը» յուրացնելու միջոց: Այդ անվանը ուրիշ բացատրություն տալ հնարավոր չէ: Մի հանգամանք, որը կարող էր Կորյունը չիմանալ, ինչպես որ չգիտեն նրա գիրքն ուսումնասիրողները: Այս պարբերության հաջորդ գաղտնիքը կապված է «բազմադիմիս շնորհագիրս» արտահայտության հետ: Կորյունը «շնորհագիր», «շնորհապատում» բառերն օգտագործում է որևէ տեքստ վարպետորեն, գեղեցիկ, «շնորքով գրված», լավագույնս շարադրված լինելու իմաստով: Նա օգտագործում է նաև «շնորհագիր հայրեր» արտահայտությունը¹⁸: Դրանից միանգամայն պարզ է դառնում, որ նա՝ Ազաթանգեղոսից արտագրելով այդ պարբերությունը, կամ չի հասկացել, թե ինչ իմաստով է իր ժամանակին այդ տերմինն օգտագործել Ազաթանգեղոսը, կամ էլ օգտագործել է այլ իմաստով ու ձևով: Իսկ Ազաթանգեղոսի օգտագործած «շնորհագիր» տերմինը իրավաբանական ակտի անվանում է և դրա տակ նա հասկացել է իրավաբա-

¹⁶ Տե՛ս *Ագամանգելոս*. История Армении. Перевод с древнеармянского на русский язык, вступительная статья и комментарии К. С. Тер-Давтян и С.С. Аревшатяна. Изд. «Наури», Ереван, 2004.

¹⁷ Տե՛ս *Խաչատրյան Ս. Ա.*, Տիրիդատ Երրորդ թագավորի հակաադանդավորական հրամանագրերը ... Երևան, 2010:

¹⁸ Տե՛ս *Կորյուն*, Վարք Մաշտոցի, Աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով՝ Ս. Աբեղյանի, Երևան, 1962, էջ 114, 119-120, 131:

նական նշանակության փաստաթուղթ՝ սեփականության վկայագրի, կոչում ու տիտղոս շնորհելու հրամանագրի իմաստով: Այն անհատական բնույթ, կոնկրետ հասցեատեր ունեցող, օրենքի հիման վրա ընդունված, ոչ նորմատիվ պետական իրավական ակտ է, որով որպես ի սեփականություն շարժական և անշարժ գույք, հողատարածքներ, տիտղոսներ ու կոչումներ են շնորհվել եկեղեցուն, նրա սպասավորներին, հավատարիմներին և դարձի եկածներին: Իսկ դա արել է, կարող էր անել, բացի թագավորից, ինչոց ինքը՝ Գրիգոր Լուսավորիչը, որն օժտված էր դրա համար բոլոր անհրաժեշտ լիազորություններով: «Քազմադիմի» բառն էլ բազմիմաստ է և այստեղ այն արտահայտում է «քազմաթիվ դեմքերի» «քազմաթիվ տեսակի» շնորհագրեր տալու հանգամանքը՝ ինչպես նաև այդ իրավաբանական նշանակության փաստաթորի անհատական բնույթը՝ ի տարբերություն օրենքի, որն անդեմ է, կոնկրետ հասցեատեր չունեցող: Այս ամենը խոսում է Հայաստանում բարձր իրավական կուլտուրայի, զարգացած իրավաբանական գիտության ու պրակտիկայի գոյության մասին: Ինքը՝ Մաշտոցը, նման իրավասություն չի ունեցել և չէր կարող շնորհագրեր բաժանել և դրանցով ունեցվածք, կոչումներ շնորհել որևէ մեկին: Դրա համար էլ Կորյունի մոտ «շնորհագիրը» ստացել է այլ՝ Մաշտոցի հնարավորություններին հարիր, իմաստ: Որ շնորհագիրը ունի իրավաբանական իմաստ, իմնավորվում է նաև այդ նույն պարբերության մեջ տեղ գտած «...կարգեալս և յօրինեալս» արտահայտության միջոցով:

Այս պարբերության հաջորդ գաղտնիքը «...ամենայն ճաշակօք կարգեալս և յօրինեալս աւետարանական հաւատոցն ծշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորաց աստի...» արտահայտության մեջ է: Իրականում, ինչպես դա երևում է մեր թարգմանության այս հատվածից, Ազարանգեղոսի մոտ խոսքը գնում է ոչ թե հորինելու, այլ նոր՝ քրիստոնեական պետական կարգ օրենքով սահմանելու, քրիստոնեական հավատի ու կրոնի հիման վրա օրենքներ ընդունելու, օրենսդրելու մասին¹⁹: Սրա իմաստը նույնպես թարգմանիչները, մեկնողները, գուցե նաև՝ Կորյունը, չեն հասկացել: Այն, որ այստեղ խոսքը օրենսդրելու մասին է, իմնավորվում է նաև Ազարանգեղոսի գրքի 890 պարբերության մեջ Աստվածաշնչից վերցրած «Յօրէնս Տեառն խորհեսցիս ի տու և ի գիշերի» մեջքերմամբ²⁰, որը Սաղմոս 1-ի 2 տաճ մոռհիֆիկացիան է: Այս ամենը ոչ մի կասկած չի թողնում, որ Ազարանգեղոսի 886 պարբերության մեջ խոսքն իսկապես օրենսդրելու մասին է, իսկ օրենսդրողը Գր. Լուսավորիչն է:

Իր հերթին «Հաճախապատում ճառզում» Գր. Լուսավորիչը նույնպես օգտագործում է «կարգ» «օրենսդրք», «ավրինաց», «յիրավունս», «յավրինաց» «յօրինաց»²¹ տերմինները: Ընդ որում, նա օգտագործում է «յաւրինել» բառը և հորինելու, և օրենսդրելու իմաստով: «Ե» ճառի 70 տաճ, զանազան արհեստների ու արհեստավորմերի մասին խոսելիս նա «յաւրինել» բառը օգտագործել է «հորի-

¹⁹ Տես Ազարանգեղոս, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 392 (393), 490 (491):

²⁰ Տես Հաճախապատում ճառք, էջ 8, 492 (493): Աստուածաշնչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 736:

²¹ Տես Հաճախապատում ճառք, էջ 8, 18, 26, 36, 40, 50-51, 69 և այլն:

նելու» իմաստով: Այնտեղ խոսվում է արհեստավորների կողմից զենք ու զարդ հորինելու, ստեղծելու մասին («...զի կարասց գեղեցկագոյն **յաւրինել** գէնս կամ զարդս...»): Այդ նույն «յաւրինել» բառը, հորինելու իմաստով, նա օգտագործել է նաև իր երկի այլ հատվածներում ևս, օրինակ՝ «Ե» ճառի 9 և 10 տներում, որտեղ կարդում ենք. «Նա (Աստված) եւ քննութիւն արարածոց **յաւրինեաց** որպէս զգիր դպրութեան եւ եղ անուանս, զի անուանքն զընտրութիւնն հայցեն զգրոյն ի միմեանց զորոշումն...», «....Երկուս Երկուս յաւրինեաց»²²: Բայց ահա Բ ճառի 6 տանը՝ «Որ յաւրինէ եւ դարմանէ եւ սնուցանէ բարերարութեամբն..» բառակապակցության մեջ, «Ե» ճառի 54 տանը՝ «աւրինադիրն յայնժամ զնոյն դայեակ զայրացուցանէ և նոքաւք խրատէ.» և այլ տեղերում այդ բառն ակնհայտորեն օգտագործվում է օրենսդրի և օրենսդրելու իմաստով²³:

Որ Գր. Լուսավորիչն օրենսդրել է, ընդ որում՝ օրենսդրել պաշտոնի բերումով, որպէս իշխանության օրենսդրական, դատական և հոգևոր իշխանության ճյուղերի ղեկավար, դա անտարակուսելի է: Այդ մասին Ազարանգեղոսը վկայում է իր աշխատության բազմաթիվ հատվածներում, մասնավորապես նաև՝ 700, 724, 854 և այլ պարբերություններում²⁴: Իսկ Մաշտոցը չէր կարող օրենսդրել, քանզի նա ննան լիազորություններ չի ունեցել: Նա ոչ դատավոր է եղել, այն էլ՝ Սեծ Հայաստանի մասշտարով, ոչ օրենսդիր և ոչ էլ հոգևոր առաջնորդ: Արևմտյան Հայաստանում աղանդերի դեմ պայքարելու համար հռոմեական կայսրը նրան ժամանակավորապես օժտած է եղել պետականական որոշ լիազորություններով, որոնք նա իրականացրել է որպէս հավատաքննիչ, բայց պատմական ոչ մի փաստ չկա այն մասին, որ նա օրենսդրել է:

Այս պարբերության մյուս խնդրահարույց հարցը նույն պարբերության մեջ եղած «...Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորաց աստի, առաւել վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն երիւրեալ, զի հեշտոնկալք և դիւրահասոյցք տիսմարագունիցն և մարմնական իրօք զբաղելոցն լինիցին, առ ի սրափել զուարթացուցանել և հաստակիմն առ խոստացեալ աւետիսն քաջալերել» հատվածն է: Ինչպես դա երևում է մեր կատարած թարգմանությունից, այստեղ Ազարանգեղոսը խոսում է Գրիգոր Լուսավորչի կողմից ընդունած օրենքների հիման վրա հանցագործների ու հանցագործությունների դեմ պայքարելու մասին, և ինչպես այստեղ, այնպես էլ այլ տեղերում²⁵ օգտագործել է «հանցավոր» և «հանցանք» տերմինների «յանցաւորաց», «յանցուցելոց» և այլ հոլովկած ծևերը, որոնք զուտ իրավական և բարոյագիտական տերմիններ են, որոնք նա որոշակիորեն տարբերել է «անցավոր» տերմինից²⁶: Բայց, ինչպես Ազարանգեղոսի, այնպես էլ Կորյունի գրքերի թարգմանիչների կողմից դրանք

²² Տես Հաճախապատում ճառը, էջ 40:

²³ Տես Հաճախապատում ճառը, էջ 8, 30, 40, 43:

²⁴ Տես Ազարանգեղոս, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 392 (393), 410 (411), 476 (477):

²⁵ Տես Ազարանգեղոս, Հայոց պատմություն, էջ 85, 91, 95, 97, 109, 121, 125:

²⁶ Տես նույն տեղում, էջ 28, 50:

թարգմանվել և օգտագործվել են «անցավորներ», «մեղք» և այլ սխալ իմաստով: Օրինակ, 598 պարբերության մեջ Ազաթանգեղոսը գրել է. «...զի և ձեզ, անգիտելոց և յանցուցելոց, լինի թողություն», իսկ նրա գրքի թարգմանիչներն այն թարգմանել են. «... որպեսզի ձեզ՝ անգետներիդ և մեղքի տանողներիդ թողություն լինի»²⁷: Սակայն իրականում դա պետք է թարգմանվեր «...որպեսզի և ձեզ՝ անգետներիդ և հանցավորներիդ, թողություն լինի»:

Նույն տերմինները հանցագործության ու հանցագործի իմաստով օգտագործվել են նաև «Հաճախապատում ճառքում»: Դրա «Գ» ճառի 150 տաճը օգտագործվել է «յանցուածոցն Աղամայ» արտահայտությունը: «Ե» ճառի 73 տաճը ասվում է. «Իսկ որք ծովութեամբ եւ արհամարհանաւք յանցանեն ըստ հնարագիտութեան արուեստիցն, անպիտան զնոսա առնեն»: «ԺԹ» ճառի 13 տաճը օգտագործվել է «խոստովան լինել զյանցանս», նույն ճառի 16 տաճը՝ «յանցավորաց անտի» արտահայտությունները²⁸: Դրանք բազում հանդիպում են նաև «Հաճախապատումի» այլ մասերում²⁹:

Այս նույն պարբերությունը պարունակում է ևս մեկ ուղղակի ապացույց այն մասին, որ «Հաճախապատում ճառքը» Գ. Լուսավորչի ստեղծագործությունն է: Դա մարմնական հաճույքներով զբաղվող տխմարներին (իսկ սեռական հանցագործությունները Գրիգորի կողմից ամենածանրն են համարվել) «սթափել Զուարթացուցանել» բառակապակցությունն է: Այն Կորյունի կողմից փոխարինված է «սթափել և զարթուցանել», բառակապակցությամբ: «Զարթնեցնել» տերմինը նույնպես բազմիցս օգտագործվել է «Հաճախապատում ճառքում», Գրիգորի կողմից, բայց տվյալ դեպքում Ազաթանգեղոսն օգտագործել է ինոնց «զուարթացուցանել» բառը, որը ուրախության, երջանկության, բուրումնավետության, լուսավորության հետ բնորոշել է զրադաշտական երկնային թագավորության «օթևանները» և դրա բնակիչներին: Հատկանիշներ, որոնք այնտեղ տեսել է և նկարագրել է Արտա Վիրապը հայտնի «Արտա Վիրապ Նամակում»³⁰: Գր. Լուսավորիչը, որը քրիստոնեական հավատ է տեղափոխել և ներդրել զրադաշտական դժոխքի և դրախտի այդ պատկերացումները, տխմարներին ցանկացել է ոչ միայն պատժել, այլ նախ և առաջ՝ շահագրգռելելով սպասվելիք հանդերձյալ կյանքի զվարթությանք, նրանց դարձի բերել, քրիստոնյա դարձնել: Խնդիր, որն ընդհանրապես չի ունեցել Մաշտոցը: Նա միայն ուղղել է հավատի խախտումները և պայքարել աղանդավորության դեմ:

Հաջորդ ապացույցն այն մասին, որ «Հաճախապատում ճառքը» գրել է Գր. Լուսավորիչը, հետևյալն է: Կորյունի գրքի «ԻԱ» գլխում նշում կա այն մասին, որ Մաշտոցը «շատ բանտարկյալներ ու կալանավորներ և նեյյալներ ազատեց՝ Քրիստոսի ահավոր զորությանք կորզելով նրանց բռնակալների ձեռքից: Եւ շատ

²⁷ Տե՛ս **Ազաթանգեղոս**, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 334 (335): **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964:

²⁸ Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 16, 30:

²⁹ Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 50, 85, 91, 94, 96, 97, 109, 120, 125:

³⁰ Տե՛ս Արտա Վիրապ Նամակ: Յուշտի Ֆրիհան, Պահլավերեն բռնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, ՀՍՍՈ ԳԱ հրատ., Երևան, 1958:

անիրավ մուրհակներ պատռեց, և շատ սգավորների ու նեղսրտածների իր մխիթարական վարդապետությամբ ակնկալություն ու հույս տվեց մեծ աստծու, մեր փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքի հայտնության ժամանակի համար...»³¹: Դա Ազգաթագեղոսի գրքի 844 պարբերության վերարտադրությունն է՝ որոշ փոփոխություններով³², որը մենք բերել ենք աշխարհաբարով, քանզի այս հատվածի գրաբարից արված թարգմանության մեջ սխալներ չկան: Անմիջապես և նորից պետք է ասել, որ Մաշտոցը նման լիազորություններ չի ունեցել և նման գործողություններ չեն կարող կատարել: Նա դատավոր և օրենսդիր, իրավաբար չի եղել, և չեր կարող ապօրինի մուրհակներ պատռել և բանտարկյալների, կալանավորվածների ազատել, և նոյնիսկ հարց է, թե դա կարող էր անել անձամբ ինքը՝ Սահակ Պարթևը: Չպետք է մոռանալ, որ Մեծ Հայաստանը Մաշտոցի գործունեության ժամանակ Իրանական պետության սուբյեկտ էր և այնտեղ և գործադիր, և դատական, և հոգևոր իշխանությունները խստագույն հսկողության տակ էին: Բացի դրանից, ինչպես արդեն ասվել է՝ սկսած Վրտաշես գ թագավորի նկատմամբ հետապնդումների պահից, Սահակ Պարթևը գրկված է եղել նաև հոգևոր իշխանությունից, Երկրում գործել է այլազգի կաթողիկոս: Իսկ Գր. Լուսավորչի լիազորությունների շրջանակի կապակցությամբ նման որևէ կասկած չի կարող ծագել: Այդ ամենը կարող էր և կատարել է նա՝ իր ստեղծած նոր քրիստոնեական օրենսդրության հիմնան վրա: Նա է եղել պետության օրենսդիր և դատական իշխանության միանձնյա ղեկավարը: Վերջապես՝ նա ուներ զորք, և նա կարող էր միայն մուրհակներ պատռել ու ազատազրկվածներին ազատել բանտերից:

Կասկածելի է նաև Մաշտոցի կողմից վանականների «շատ և անհամար խմբեր» ստեղծելն ու վաճեր հիմնելը, որի մասին վկայում է Կորյունը: Բացառված չեն, որ նա մի քանի նման հաստատություններ հիմնած լինի: Եղիշեի վկայությամբ էլ վաճեր, կամ, ավելի շուտ, ճգնավորներ կամ միայնակյացներ, 5-րդ դարի կեսերին իսկապես եղել են³³, բայց նորից և նորից պետք է հիշել, որ Մեծ Հայաստանն այդ ժամանակ հանդիսանում էր Իրանական կայսրության մաս և «շատ ու անհամար» վաճեր հիմնելու գործողությունները կարող էին հանդիպել այդ պետության ղեկավարության կտրուկ հակազդեցությամբ: Բացի դրանից, նման ծեռնարկումը կաթողիկոսի լիազորության հարց է, որը պետք էր համաձայնեցնել իրանական կառավարության հետ: Իսկ այդ կառավարությունը, որն արդեն, 5-րդ դարի սկզբից սկսած, ակնհայտորեն կուրս էր վերցրել հավատափոխ անել քրիստոնյա Հայաստանը (որը, ըստ Կորյունի, ու չգիտես ինչու, փորձում էր ևս մեկ անգամ քրիստոնյա դարձնել Մաշտոցը)³⁴, մի՞թե նման լայնամասշտար գործո-

³¹ Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 121:

³² Տե՛ս Ազգաթագեղոս, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1983, էջ 470 (471):

³³ Տե՛ս Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, ԵՊՀ հրատ., Երևան, 1989, էջ 45:

³⁴ Տե՛ս Խաչատրյան Ը. Ա. Ուказы Езидигерта Второго и его министра Михнерсеха об отречении армян от христианства и их аксиологический, юридический, логический и социологический анализ. Ереван, 2009.

ղությունների հետ կիամակերպվեր: Բացի ամենայնից, դրանք անհրաժեշտ էր ֆինանսավորել, նրանց կալվածքներ ու ապրուստի միջոցներ տրամադրել, որի հնարավորությունը դժվար թե հայ եկեղեցին այդ ժամանակ ունենար: Իսկ Գր. Լուսավորիչն ուներ այն և նա էլ դա արել է, որի մասին վկայում է Ազաթանգեղոսը:

Կորյունը իր գրքի «ԺԱ» գլխում Մաշտոցին համեմատում է «Օրենսուսույց» Մովսեսի հետ: Այդ նույն պարբերությունը գրեթե նույնությամբ առկա է Ազաթանգեղոսի գրքում, որտեղ նա այդպես է կոչում Գր. Լուսավորիչն³⁵: Եվ իրականում օրենսուսույցը, օրենսդիրը, ինչպես նաև Ավեստան ապասրբացնողը և հայերեն գրեթե գործողության մեջ դնողը, Աստվածաշունչը հայաբարբառ, հայերեն տառերով գրված դարձնողը Գր. Լուսավորիչն է: Ինքը, Մաշտոցը, օրենսդիր և օրենսուսույց չի եղել, և նրան Մովսեսի հետ չի կարելի համեմատել: Ծիշտ է, գուցե այդ բառը Կորյունը օգտագործել է կրոնուսույցի իմաստով, իսկ հայաբարբառ դարձնողի տակ նկատի է ունեցել նրա կողմից հայկական տառեր գտնելու և գործածության մեջ դնելու հանգամանքը, բայց բոլոր դեպքերում նա այս պարբերությունը, ինչպես մնացածները, վեցրել է Ազաթանգեղոսից:

Քննության առարկա ճառերի վերնագրերում միշտ գրված է եղել և անընդհատ կրկնվում է Լուսավորիչ անունը, որն էլ դրանց պատկանելության վերաբերյալ կարևոր ապացույցներից մեկն է, և այդ առթիվ հայոց եկեղեցում երբեք որևէ կասկած չի ծագել:

«Յաճախապատում ճառքի» մեջ առկա են նաև Աստվածաշնչի «Մակաբայեցիների» գրքերից կատարված մեջբերումներ (Զ:43 և այլն), իսկ Ազաթանգեղոսի գրքում՝ «Սիրաքի իմաստությունը» գրքից³⁶, իսկ դա նշանակում է, որ Գր. Լուսավորիչը ու Ազաթանգեղոսի կողմից կատարած Աստվածաշնչի թարգմանությունը եղել է ավելի ընդգրկուն և այլ սկզբունքների վրա հիմնված և դրա աղբյուրների շարքում են եղել այն ժամանակ գոյություն ունեցող բոլոր աղբյուրները՝ Օրիգենեսի «Վեցիշխանը», ասորական Ա-շունչը, հրեական Թորան, Յին Կտակարանի «Յոթանասնից» հունարեն թարգմանության գրքերը, այդ թվում նաև՝ «Մակաբայեցիների», «Սիրաքի իմաստությունը» և այլն, որոնք չեն եղել Ա. Մաշտոցի ու Սահակ Պարթևի դեկապարությամբ թարգմանված Ա-շնչում: Դրա մասին ուղղակիորեն վկայում է Ս. Խորենացին, ըստ որի նրանք թարգմանել են միայն Յին Կտակարանի 22 (39) գրքեր, այսինքն՝ հրեական Թորան կամ հրեաների կողմից կանոնական համարվող 39 գրքերը³⁷, որոնց մեջ չկան «Յոթանասնի» մեջ նտած «Սիրաքի իմաստությունը», «մակաբայեցիների» և երկրորդականոն համարվող այլ գրքեր: Ծիշտ է, եղիշեի գրքում տեղ գտած Վարդան Մամիկոնյանի ճառը, որով նա դիմել է հայկական գործին 451թ. Ավարայրի ճակատամարտից առաջ,

³⁵ Տես **Կորյուն**, Վարք Մաշտոցի, էջ 106: **Ազաթանգեղոս**, նույն տեղը, էջ 476 (477):

³⁶ Տես Յաճախապատում ճառք, էջ 35: **Ազաթանգեղոս**, Յայոց պատմություն, 1983, էջ 149, 153 և այլն:

³⁷ Տես **Մովսես Խորենացի**, Յայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1981 էջ 404 (405): Սայթունություններում կարելի է գտնել այս գրքի առաջնային համարվող այլ գրքեր: Ծիշտ է, եղիշեի գրքում տեղ գտած Վարդան Մամիկոնյանի ճառը, որով նա դիմել է հայկական գործին 451թ. Ավարայրի ճակատամարտից առաջ,

կրում է «Մակաբայեցիների» գրքերի ազդեցությունը³⁸: Բայց դա չի նշանակում, որ դրանք Եղիշեի ժամանակ ընդգրկված են Եղել հայկական Ա-շնչում: Գուցե դրանք թարգմանվել և օգտագործվել են որպես կարդալու համար թույլատրված գրականություն, բայց այդ մասին որոշակի ոչինչ հնարավոր չէ ասել: Միաժամանակ, պետք է նշել, որ բոլոր Երկրորդականոն գրքերը, սկսած 11-րդ դարից, հայկական Աստվածաշնչի մեջ են մտցվել Կիլիկյան Յայաստանում: Դա արվել է միայն կաթոլիկական Եկեղեցու ազդեցության հետևանքով, խաչակրաց արշավանքների ժամանակ և դրանք առկա են գրեթե բոլոր այն հայկական Աստվածաշնչերում, որոնք մեզ են հասել և պահպանվում են Մատենադարանում³⁹: Իսկ որ Գր. Լուսավորիչն ու Ազարանգեղոսը կատարած են Եղել Ա-շնչի թարգմանություն, որևէ կասկած չի հարուցում: Դրա ապացույցն է այն հանգամանքը, որ նրանց գրքերում առկա աստվածաշնչյան մեջբերումների 95 տոկոսը չի համընկնում Սահակ-Մեսրոպյան Ա-շնչի նույն հատվածների հետ:

Կան նաև այս շարքի և այլ շատ ապացույցներ, որոնք քիչ ծանրակշիռ չեն, քան թվարկվածները, բայց սրանք էլ բավարար են ապացուցելու համար, որ «Յաճախապատում ճառքը» պատկանում է Գրիգոր Լուսավորչի գրչին, իսկ ընդորինակողը Եղել է Կորյունը և ոչ թե Ազարանգեղոսը:

ОБ АВТОРСТВЕ "ЧАСТОПОВТОРЯЕМЫХ РЕЧЕЙ"

C. A. Xachatryan

В статье приводятся доказательства того, что "Частоповторяемые речи" были написаны не Месропом Маштоцем, а Григором Просветителем.

ON THE AUTHORSHIP OF "OFT-REPEATED SPEECHES"

S. A. Khachatryan

The article brings evidence that the author of "Oft repeated speeches" is not Mesrop Mashtots but Gregory the Illuminator.

³⁸ Տես **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, ԵՊՀ հրատ., Երևան, 1989: Պետք է նշել, որ տպագրության ժամանակ այս ամենը պատահարար, տեխնիկական պատճառներով, դուրս են մնացել մեր «Տիրիդատ Երրորդ թագավորի հակաղանդավորական հրամանագրերը... գրքից:

³⁹ Տես Սայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հ.հ. 15, Երևան, 1999-2004: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան գրադարանի, հ. 15, Երևան, 1965-1976: